

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
615 STUART AVENUE
MONTREAL 151, P.Q.

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ ՀԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

* * * * *

ՓԵՏՐՈՒԱՐ 27, 1972
ՄՈՆԹՐԷԱԼ-ԳԱՆԱՏԱ

* * * * *

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
ՄՈՆԹՐԷԱԼ

Հ Ր Ա Խ Է Ր

ՏԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Մոնթրեալի Սուրբ Գրիգոր Լուսավորչ Մայր Տաճարի
Հովիւն ու Ծխական Խորհուրդը այսու կուգան Ձեզ հրաւիրու-
մունքով Տարեկան Ծխական Ժողովի որպիսի գումարուի յառա-
ջիկայ Կիրակի Փետրուար 27-ին Կ.Վ. Ժամը 8-ին եկեղեց -
ւոյս Գաբրիպեան Սրահին մէջ:

Իւրաքանչիւր լրատու անդամի պարտականութիւնն է ներկայ
գտնուիլ այս կարեւոր անդամական ժողովին:

ԾՐԱԿԱՐԳ

- 1- Աղօթք եւ բացում:
- 2- Ընտրութիւն օրուան դիւանի :
- 3- Անդրադարձում նիւթա-բարոյական տեղեկատուութեանց :
- 4- Ընտրութիւն պաշտօնէ դադարող 4 Ծխական անդամներու :
- 5- Ընտրութիւն հաշուքներէ մարմնի :
- 6- Ընտրութիւն ընտրողական Յանձնախումբի :
- 7- Թելադրութիւններ եւ ջանազանք :
- 8- Փակման խօսք եւ աղօթք :

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԹԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ
ՑԱՆԿԵՐ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ :

ՀԱՇՈՒՔՆԵՒԶ ԾԱՐԾԻՆ :

- 1- ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՌԱՔԵԼ
- 2- ԷՍԷՆ ՊԵՐՃ
- 3- ԿԷՐԻՔԵԱՆ ԱՐԱ
- 4- ԿԻԿԻԵԱՆ ՅԱԿՈՔ
- 5- ՄԷՆԷՆՏԵԱՆ ՄԿՐՏԻԶ
- 6- ՄՈՒՐԱՏԵԱՆ ՓՈՂ
- 7- ՊԱՍՄԱՃԵԱՆ ԱՐԹՕ
- 8- ՊԷՐՊԷՐԵԱՆ ՕՆՆԻԿ

- 1- ԱԼԹՈՒԵԱՆ ՎԱՀԷ
- 2- ԳԱԶԱՆՃԵԱՆ ՎԱՀԱՆ
- 3- ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ ՄԻՍԱՔ
- 4- ՋԱՏԸՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
- 5- ՄԱՐԿՈՍԵԱՆ ՀԱՅԿ
- 6- ՕՂԻԿԵԱՆ ԿԱՅԾԱԿ

Յ:Գ Իւրաքանչիւր անդամ կարենալ մասնակցել լու ընդհանուր
Ժողովին որպէս լրատու անդամ պարտի 1971 տարուայ
իր անդամատուրքը վճարած ըլլալ:

ԽՕՍԲ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԿՈՂՄԷ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ

Հոգեշնորհ Հայր Սուրբ,
Արժանապատիւ Հայրեր,
Մեծարգոյ Անդամ-անդամուհիներ,

Միական Խորհուրդս այսօր Ձեզ կը ներկայանայ
անցնող տարեշրջանի ամբողջական տեղեկատուութիւնը ընելու,
հաշիւ տալու Ձեր իւրաքանչիւրին:

Քիչ յետոյ մեր անդամ-անդամուհիները առիթը
պիտի ունենան քննարկելու տրամադրուած տեղեկատուութիւն-
ները, որոնցմէ ի յայտ պիտի գան ընդհանուր գործունէութեան
թեանց լայն ծաւալումը անցնող տարիներու եւ վերջինին մի-
ջեւ որը գրաւականը պիտի կազմէ տարուած ու թափուած աշխա-
տանքներուն:

Որպէս ատենապետը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
Հայաստանեայց Եկեղեցւոյ պարտք կը համարեմ շնորհակալական
ու գնահատութեան խօսք ուղղել Պատուարժան Ժողովիդ, մեր
իւրաքանչիւր գործակից ու աշխատակիցներուն, որոնց անգը-
նահատելի ջանքերուն ու սիրալոյսով մասնակցութեան շնորհիւ
կարելի եղաւ այս երդիկին ներքեւ ամբողջացնել բաւական
յաջող ու գործունէութեամբ լեցուն տարի մը: Մենք մեր այս
փառաւոր կալուածին մէջ համագործակցութեամբ իւրաքանչիւր
մարմնի ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ. եւ թէքէեան Մշակութային
Միութեանց ազգանուէր վարիչներուն յաջողեցանք բոլորել
տարի մը եւս:

Այս պատեհութեամբ պարտք կը նկատենք հրապա-
րակաւ շնորհակալութիւններ յայտնել վերոյիշեալ կազմակեր-
պութեանց վարիչ-ղեկավար տարրերուն, Եկեղեցւոյս Կրօնական
ու սարկաւազաց դասուն, ենթակայ բոլոր մարմիններու վար-
չութեանց անդամներուն ինչպէս նաեւ Միական Խորհուրդոյ
անդամներուն, որոնցմէ չորսը պաշտօնէ կը դադրին այսօր:

Վստահ ու լիայոյս ըլլալով որ Ձեր իւրաքան-
չիւրը պիտի շարունակէ բերել իր Օգտաշատ ու արդիւնաբեր
գործակցութիւնը արեւշատութեամբ լեցուն տարիներ կը մաղ-
թենք թող Հայ համայնքը ունենայ բարգաւաճ կեանք մը այս
հիւրընկալ փետրուն մէջ եւս:

Վահէ Բ է Թ Լ Ի

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի

1971-1972

Մոնթրէալի Հայց Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ տարեկան
ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Կիրակի 28 Փետրուար 1971ին, Ս. Գրիգոր
Լուսաւորիչ Մայր Տաճարի Գարիպեան սրահին մէջ, նախագահութեամբ բարեխնամ
Առաջնորդական Փոխանորդ Գեր. Տ. Վաչէ Եպս. Յովսէփեանի եւ ի ներկայութեան
գաղութիս հովիւ Տ. Կիւրեղ Բհն. Եթէնէկեանի եւ Օգնական հովիւ Տ. Սահակ
Ա. Բհն. Պալեանի:

Սոյն ժողովի ընթացքին գաղտնի քուէարկութեամբ տեղի ունեցաւ մասնակի
ընտրութիւն փոխարինելու համար անցեալ Ծխական Խորհուրդի կազմէն դադար-
եալ հինգ ազգայինները: Առաւելագոյն քուէներու կարգով ընտրուեցան հետեւ-
եալ ազգայինները՝ Պրն. Վահէ Բէթլի, Գէորգ Ճանգուլ, Տթթ. Յարութիւն Ար-
զումանեան, Լեւոն Գործեան եւ Նազար Եազրճեան:

Խորհուրդս իր անդրանիկ նիստին կատարեց դիւանի ընտրութիւնը հետեւեալ
ձեւով.

Ատենապետ	Պր. Վահէ Բէթլի
Փոխ Ա. պետ	Գ. Ճանգուլ
Ատենադպիր	Ն. Պապիկեան
Փոխ Ա. դպիր	Ն. Եազրճեան
Գանձապահ	Տթթ. Յ. Արզումանեան
Փոխ Գանձապահ	Լ. Գործեան

Խորհրդականներ Պրնք. Ս. Թաշճեան, Վ. Շաքարեան, Տ. Օհաննի-
էսեան: Տարւոյս ընթացքին խորհուրդս գումարեց 45 նիստեր: Նոյն շրջանին
էնտուկան պատճառներով խորհուրդէս հրաժարեցան Պրնք. Տ. Օհաննիսեան եւ
Վ. Շաքարեան, որոնց փոխարինեցին առաւելագոյն քուէ ստացող Պրնք. Օննիկ
Պէրպէրեան եւ Յակոբ Կիկիեան:

Առաջնորդական Փոխանորդի Փոփոխութիւն

Սոյն տարեշրջանիս Թեմիս Փոխանորդ Գեր. Տ. Վաչէ Եպս. Յովսէփեան Ամերի-
կայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ ընտրուեցաւ եւ իր մեկնումով Առաջնորդական
Փոխանորդի անօր թափուր մնաց: Ուրախութեամբ կուզենք յիշել թէ Թեմիս բարե-
խնամ Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի բարեհաճ կարգադրութեամբ
Հոգջ. Տ. Զաւէն Մ. Վ. Արզումանեան Դեկտեմբերի 4ին քաղաքս ժամանեց առժամեալ
հանգամանքով ստանցնելու համար նոյն պաշտօնը: Ուրախ ենք յայտնելու թէ
Հայր Սուրբը լծուած է լուրջ աշխատանքի, փայլուն հեռանկարներով:

Դարձեալ Թորգոմ Արք. Մանուկեանի կարգադրութեամբ գաղութիս հովիւ Տ. Կիւ-
րեղ Բհն. Եթէնէկեան նոյեմբեր 16ին, 1971 փոխադրուեցաւ Միացեալ Նահանգներ
եւ որուն տեղ համայնքիս հովիւ նշանակուեցաւ նիւ Եորթէն Արժ. Տ. Մամիկոն
Զհն. Ոսկանեան:

Պատգամաւորական Ժողով

Այս տարի ուրախ տարի մը եւս եղաւ մեզի համար նկատելով որ առաջին անգամ
ըլլալով Մոնթրէալի գաղութի պատմութեան մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տա-
ճարին մէջ գումարուեցաւ Հիւս. Ամերիկայի 69րդ Թեմական Պատգամաւորական Ժո-
ղովը, նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի եւ
մասնակցութեամբ հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներու: Նիստերու ըն-
թացքին նկատի առնուեցան Թեմիս զանազան քաղաքներու կազմակերպչական վիճա-
կը եւ զանոնք շահագրգռող հարցեր:

Նկատելով որ գաղութս օժտուեցաւ նոր եկեղեցիով մը, եկեղեցւոյ Ծինու-
թեան Յանձնախումբը ինքնաբերաբար դադարեցաւ գոյութիւն ունենալէ եւ պաշտօն
յանձնուեցաւ Յանձնախումբի Ատենապետ Տթթ. ԱրթՕ Տէմիրճեանի կազմելու պար-
տուց շիջման յանձնախումբ մը որուն գլխաւոր ու միակ նպատակը պիտի ըլլայ
նուիրահաւաքութիւն կատարել եկեղեցւոյ պարտքը գոցելու համար:

ԲՈՒՐԱՍՏԱՆ

Այս տարի եւս համայնքիս պաշտօնական ամսաթերթը ԲՈՒՐԱՍՏԱՆ կանոնաւո-
րապէս լոյս տեսաւ եւ առարկայ դարձաւ անդամներուս գնահատանքին եւ հոգա-
ծութեան:

Շաբաթօրեայ Վարժարան

Ուրախութեամբ կը հաստատենք թէ այս տարուան շաբաթօրեայ հայ դպրոցը
օժտուած ըլլալով նուիրեալ եւ գիտակից ուսուցչուհիներով գնահատելի աշխա-
տանք կատարեց համայնքէս ներս:

Այցելութիւններ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի հրահանգով Մայր
Հայրենիքէն քաղաքս ժամանեցին Արժ. Տ. Վազգէն եւ Տ. Յովհաննէս քահանաներ
մասնակցելու համար Թեմիս Հոգեւորականաց Համագումարին: Քահանայ Հայրերը
իրենց ելոյթներով անգամ քիչ եւս ամրապնդեցին մեր համայնքի ժողովուրդին
հաւատքը դէպի Հայց. Առաքելական եկեղեցւոյ Կեդրոն Ս. Յիւսէփին:
Միացեալ նահանգներ իր ճամբուն վրայ Մոնթրէալ այցելեց Ս. էջմիածնի
Հոգեւոր ձեմարանի Տեսուչ Հոգ. Տ. Շնորհք Վրդ. Գասպարեան: Նաեւ քաղա-
քս այցելեց Հայաստանի գրողներու Միութեան քարտուղար Պրն. Միքայէլ
Շաթրեան:

Ձեռնարկներ

Սոյն շրջանին Խորհուրդս հոգանաւորեց եւ նախաձեռնարկ եղաւ կարգ մը
ազգային եւ կրօնական բնոյթ կրող հանդիսութիւններու որոնց կարգին յիշա-
տակութեան արժանի են Ապրիլեան մեծ եղեգնի յուշահանդէսը, Պերճ ժամկոչ-
եանի երգեհոնի նուագահանդէսը եւ Երանշ. Գարեգին Կաթողիկոսի ծննդեան
100 ամեակի հանդիսութիւնը նախագահութեամբ Գեր. Տ. Բաբգէն Եպս. Վար-
ժապետեանի:

Վերեւ նշուած ձեռնարկներու կողքին կարելութեամբ կը յիշենք նաեւ
եկեղեցւոյս ի նպաստ կազմակերպուած տարեկան շքեղ պարահանդէսը եւ անոր
գտած աննախընթաց յաջողութիւնը, որ արդիւնքն էր Խորհուրդիս եւ կարգ մը
նուիրեալ ազգայիններու ինչպէս նաեւ Տիկնանց օժանդակ յանձնախումբին
կատարած տքնաշան աշխատանքին:

Խողհրդակատարութիւնք

Անցեալ տարւոյ ընթացքին եկեղեցւոյս մէջ կատարուած են 37 Մկրտութիւնք,
81 Հարսանիք-Պսակ եւ 18 մահեր:

Ի դիմաց Եխական Խորհուրդի
Ատենադպիր Ատենապետ
Ն. Պապիկեան Վահէ Բէթլի

ԵԿԵՂԵՑԻՈՑ ԶՈՆՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ
ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցւոյ ճոնտի Յանձնախումբի հետեւեալ կազմը ընտրուեցաւ
անցեալ ընդհանուր Անդամական Ժողովին կողմէ կայացած փետրուար 28
1971 ին:

Վահէ Ալթունեան, Արթօ Տէմիրճեան, Ժիրայր Տէրվիշեան,
Կայծակ Օղիկեան, Միսաք Կուտսուզեան, Արամ Կուտսուզեան,
Վահան Գազանճեան, Օննիկ Պալեան

Պարոնայք Ա. Կուտսուզեան եւ Վ. Գազանճեան անձնական պատճառ-
ներով հրաժարեցան Յանձնախումբիս գործունէութեան առաջին շրջանին:

Ընտրութեան օրէն սկսեալ Յանձնախումբս կանոնաւոր ժողովներ
գումարեց անուշազն ամիսը անգամ մը, որոնց առաջին արդիւնքը եղաւ
գաղութիս ընդհանուր եւ լրիւ անդամացանկի մը պատրաստութիւնը որ կը
պարունակէ մօտ 700 անձերու արձանագրութիւններ: Սոյն ցանկը պատրաս-
տուեցաւ զանազան միութիւններու եւ կազմակերպութեանց ցանկերու մի-
ացումով: Յանձնախումբս տեղեակ ըլլալով թէ այս ցանկը կը ներկայացնէ
Մոնթրէալահայկէսթեան բոլոր խաւերը, իր ապագայ անմիջական դրամահաշա-
քումի ծրագիրը հիմնած է շուրջ 800 ընտանիքի վրայ: Վերոյիշեալ թուա-
կանը կորիզը պիտի կազմէ եկեղեցւոյս անդամներուն:

Ցանկերու պատրաստութենէ անմիջապէս վերջ կազմուեցաւ Տիկիւն-
ներէ բաղկացած ենթայանձնախումբ մը, որոնց պարտականութիւնն է հեռա-
ձայնով եւ Այբուբենական կարգով հաղորդակցութեան մէջ մտնել ազգային-
ներու հետ եւ իրենց յիշեցնել Ազգային Տուրքի վճարման ձեւն ու պայ-
մանները:

Տիկիւններու ենթայանձնախումբը կը բաղկանայ հետեւեալներէ:

Մ. Գունթէրեան, Ա. Ազնաւուր, Ա. Գալայճեան,
Ա. Գոճոեան, Ա. Միրոեան, Ա. Միշմանեան,
Ն. Միրինեան:

Պարտաճանաչ տիկիւններու աշխատութեան որպէս արդիւնք մեր
ազգայիններու բարեկամեցողութեամբ արդէն իսկ մօտ 140 անձեր իրենց
վճարումները կատարած են, կը մնայ ամբողջացնել այբուբենական ցանկը
մինչեւ յառաջիկայ Մարտ-Ապրիլամիսներուն: Յուսալից ենք որ 800 ըն-
տանիքներու նախնական աշխատանքները պիտի արդիւնաւորուին:

Մեր նիւթական ակնկալութիւնը կը յենու ամսական 1000 տուարի
այսինքն 20 անձերու 50 ական վճարումներուն վրայ, որ Սեպտեմբեր ամի-
սէն ի վեր աւելիով իրագործուած է: Սոյն եկամուտին վրայ կաւելնայ
զանազան ազգայիններու սրտաբուխ նուիրատուութիւնները եւ եկեղեցւոյս
Մարմիններու գործունէութեանց նիւթական արդիւնքները: Ուրեմն մեր
տնտեսական տարին պիտի վերջանայ լրացումովը Այբուբենական ցանկին եւ
800 անձերու զանձումները ամբողջանալէ վերջ: Յառաջիկայ Յունիս ի
մէջ յուսալից ենք որ պիտի կարենանք 1972 ի զանցումները գլուխ հա-
նել:

Արդիւնք մեր մէկ տարուայ գործունէութեանց կը յանձնարարենք
հետեւեալը:

Տրուած ըլլալով որ 1972 տարուայ մէջ գաղութին ամբողջական ցանկը պատրաստուած պիտի ըլլայ եւ եկեղեցւոյ անդամները մեծամասնութեամբ իրենց 50 տոկոսի տոկոսը վճարած պիտի ըլլան, յաջորդ տարի այս նուիրահաւաքումի գործը կը կատարուի քաղտուղարի մը կողմէ հովանաւորութեամբ Մխական Խորհուրդէն անդամի մը: Այս պարագային կառաջարկենք ձոնտի Յանձնախումբին լուծումը:

Արդ Յունուար ամսուայ ընթացքին Յանձնախումբս միացեալ ժողով մը գումարած է Մխական Խորհուրդի ներկայութեան ինչպէս նաեւ Երկու Պատգամաւորներու: Սոյն ժողովին մէջ որոշում առնուած է թէ 1972 տարեշրջանէն սկսեալ ազգայիններու վճարած յիմուն տոլարը պարհենակէ կարելիութեան սահմաններուն մէջ ի հարկէ տասը տոլարի գումարը եւ զայն փոխանցուի որպէս անդամատուրք Մխական Խորհուրդի գանձին: Առնուած այս որոշումը արդէն կարողացնէ Մխականի եւ ձոնտի Յանձնախումբի գործունէութեանց միացումը:

ի դիմաց ձոնտի Յանձնախումբի

Միսաք Կուտսուզեան Տոքթ Ա. Տեմիրճիեան
Ատենադպիր Ատենապետ

ԵԿԵՂԵՑԻՈՑ ԶՈՆՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ
ՆԻԻԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

<u>Մ Ո Ւ Տ Բ</u>		<u>Ե Լ Բ</u>	
Դրամատան մէջ 1.1.971	4906.16	ՊԱՐՏԲ	12500.00
Տոկոս եւ տոլարի սակ	255.42	Տոկոս	9740.68
Գանձուած վարձք	5000.00		21640.68
<u>ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ</u>		Ազգապատկան հողի տուրք	817.90
Տիկին Մարի Մանուկեան	10000.00	<u>ՄԱՍՔԻՆ</u>	
Միութիւններէ	4820.00	Մկրտութեան աւագան եւ	
Անհատներէ	9644.00	Սրահի վարագոյր	8065.88
		Նորոգութիւններ	8767.68
			6827.56
			29286.09
		Դրամատան մէջ 81.12.71	5889.49
	<u>84625.58</u>		<u>84625.58</u>

— 0 — 0 — 0 — 0 — 0 —

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ

Միակամ խորհուրդոյս ծանր եւ պատասխանատու գործին, նիւթապէս եւ բարոյապէս զօրազիզ նուիրեալներու հոյլ մը, որ կը գործէ 45 անդամներով նորընտիր վարիչ ունենալով Պրն. Գեղամ Շիրվանեանը:

Կիրակնօրեայ եւ հանդիսաւոր օրերու սրբազան երգեցողութեանց առընթեր ստանձնած է հոգը եկեղեցական կազմածներու կամ գոյքերու պահանջքին:

Գերաշնորհ Տ. Վաչէ Եպիսկոպոս Յովսէփեանի հրաժեշտի Ս Պատարագի երգեցողութիւնները վստահուած է նիւ Եորթի Ս Վարդան Մայր Տաճարի համանուն Դպրաց Դասուն, որոնց ամբողջական կազմի ներկայութիւնն ու ցոյց տուած յաջողութիւնը, գաղութիս մէջ ստեղծուած եռուզերը ու մանաւանդ հիւրերու ի յարգանս կազմակերպուած պարանցիկ երեկոյթի անօրինակ փայլը պիտի մնան անշնչելի յիշատակներ:

Դպրաց Դասս իր մասնակցութիւնը բերած է Մամիկոնեան Մշակութայինի եւ ՀԵԵԿԱ ի միասնաբար կազմակերպած երանաշնորհ Գրեթին Կաթողիկոսի ծննդեան հարիւրամեակի յիշատակի հանդիսութեանց:

Գիտցած է յարգանքի հանդիսութեամբ մը դրուատել ու փառաբանել անձնուէր գործունէութիւնը իր անխոնջ Դպրապետուհիին Տկն Մարգրիտ Զաւաւաթեանին, որուն անհանգստութեան պատճառաւ ակամայ հրաժարումը զգալի տորուստ մը պիտի նկատուի:

Մեծաթիւ համակիրներու ներկայութեան կրօնական ու աշխարհիկ հանդիսութիւններով տօնած է իր հիմնարկութեան 18րդ տարեդարձը նոյեմբերի 24-ին: Ստեղծելով առիթը յիշատակելու խնկելի նախորդներն ու մատուցանելու երախտագիտական արտայայտութիւնները զիրենք քաջալերող մարմիններու եւ զօրազիզ անձնաւորութեանց:

Կանոնաւոր կերպով կը շարունակէ փորձերը յառաջիկային եկեղեցասէր համայնքիս աւելի մեծ հոգեկան վայելք պարգեւելու յոյսով ու հաւատքով:

Վերջին շրջանին խորհուրդս նուիրած է 2000 Տոլարի գումար մը:

Ժիրայր Այվատեան Ատենադպիր Արթո Սրկ Բէփէքեան Ատենապետ

ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ
ՆԻԻԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՄՈՒՏՔ	ԵԼՔ		
Փոխանձուած գումար	202:54	Սենեակի կահաւորում	158:80
Տարեդարձի գուտ հասոյթ	489:15	Զանազան ծախսեր	97:88
Պնակներէ	825:69		
Ս Պսակի մասնակցութենէ	40:00	Առայժմ պատրաստ գումար	300:75
	<hr/>		<hr/>
	1057:88		1057:88

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱՍԷՐ
ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Հոգեշնորհ Հայր Սուրբ,
Յարգելի Ծխականներ,
Սիրելի գործակիցներ,

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը՝ Ձեզի կր ներկայացնէ իր 1971 շրջանի գործունէութիւնը:

1. Ապրիլ 28-Մայիս 2 Եկեղեցականներու համագումարին առթիւ, ճաշերու պատրաստութիւն եւ սպասարկութիւն:
2. Նոյեմբեր 7ին Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի ծննդեան հարիւրամեակին առթիւ հանդիսաւոր Ս. պատարագէն ետք ձաշկերոյթ:
3. Րամբ Սէյլի ձեռնարկը որ տեղի ունեցաւ նոյեմբեր 20ին:
4. Հոգեշնորհ Հայր Սուրբի գալուստին առիթով եւ մեր Մայր Տաճարի օծման առաջին տարեդարձի առթիւ մատաղի ճաշ:
5. Քրիսմոսի առթիւ թէյ-պազարը որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 18-19ին մեծ յաջողութեամբ:

Ասոնցմէ զատ օգնած ենք Ծխականի բիթնիթին, Դպրաց Դասու կրկնակ ճաշերուն: Այս առիթով կր խոստանանք շարունակել մեզի վստահուած գործը ի փառս եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյս:

Մնամք ազնիւ զգացումներով եւ յարգանք

Ատենադպրուհի
Շ. ԲՐՈՒՏԵԱՆ

Ատենապետուհի
ԵԻՆԻԿԷ ԳԱՐԻՊԵԱՆ

000000-----000000

ՏԵՂԱԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՏԻԿՆԱՆՑ
1971ի օժԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

Այս տարի մեզ համար ուրախութեան տարի մր եղաւ Զատիկուայ աւանդական գունաւոր հաւկիթներու պատրաստութիւնը կատարել մեր եկեղեցւոյ շէնքին մէջ, դիւրացնելով մեր աշխատանքի պայմանները: Պատրաստուեցան դարձեալ 900ի մօտ զարդարուն եւ ճաշակաւոր կողովներ:

Ընդհանուր մուտք	2,991.21	տոլար
ելք	781.65	
շահ	2,209.56	

Եկեղեցւոյ ֆոնտին յանձնեցինք այդ թուականներուն 2,000 տոլարի չէք մը: Հոգեւորականաց համագումարին մեզի պարտականութիւն տրուեցաւ Քոթթէյլի խրախճանքը, Ապրիլի 28ին եւ այս առթիւ Յանձնախումբս լծուեցաւ լուրջ աշխատանքի համադամ ուտելիքներ պատրաստելով: Ներկաներու հոծ բազմութիւնը, ճաշերու ճոխութիւնը եւ գեղարուեստական բաժնի ցաշողութիւնը լաւ արձագանգ տուաւ զաղութէս ներս:

Դրամական մուտք այդ առիթով	2,205.15
ելք	548.00
շահ	1,662.15

Այս գումարն ալ յանձնուած է Մխական Խորհուրդին:

Նոյեմբեր 19ին Շաթօ Շամբլէյնի պանդոկին մէջ տեղի ունեցաւ եկեղեցւոյ Տարեկան Մեծ Պարահանդէսը:

Այս տարի երրորդ տարին թեւակոխելով Տիկնանց օժանդակը իր կարեւոր բաժինը բերաւ զանազան պարտականութիւններով, գլխաւորաբար տեպիւզանդներու կարգադրութիւններով, բարոյական եւ նիւթական յաջողութեանց նպաստելով:

Նախորդ տարիներուն հրապարակաւ մեր ըրած խոստումներուն հաւատարիմ մնալով ջանացինք մեր լաւագոյնը ընել համայնքիս գործերու յաջողութեան համար: Նոյն թափով պիտի շարունակենք միշտ օգտակար ըլլալ սուրբ եկեղեցւոյս նուիրական գործին:

Ի դիմաց Տիկնանց օժանդակի

ԱԼԻՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Վարչական Կազմ Տիկնանց օժանդակի

- | | |
|----------------|---------------------------------|
| Ատենայետուհի | Այտա Գուլումճեան |
| Փոխ Ա. պետուհի | Աղաւնի Կուտսուզեան |
| Ատենադպրուհի | Ալիս Մելքոնեան |
| Գանձապահուհի | Արաքսի Քէսթէկեան |
| Թղթակից Քարտ | Նատիա Շիրինեան |
| Յարաբերութիւն | Արաքսի Գոճոյեան եւ էլիզ Տէրվիշ. |
| Խորհրդականներ | Արշալոյս Թավուքճեան |
| | Վարդուհի Եղիայեան |
| | Հայկուհի Շամլեան |

Անդամուհիներ - Ա. Շերոյեան, Ա. Գարիպեան, Ա. Թամիկեան, Ա. Փափագեան, Մ. Քիւթնէրեան, Մ. Ալթունեան, Ս. Գունթէր, Ս. Տէմիրճեան, Ս. Տէր Օհաննէսեան, Ս. Խանճեան, Ս. Աճէմեան:

2205.15
 548.00

 1662.15

 731.01
 543.89

 1274.90

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
Մոնթրէալ

Պատուարժան Մխական Խորհուրդ
Հայաստանեայց Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Մոնթրէալ,

Յարգելի Տիարք,

Անգամ մը եւս կանգ առած նոր տարւոյ սեմին, առ ի սովորութիւն, կանդրադառնանք անցեալ տարուան մեր ունեցած գործունէութիւններուն որոնք, ինչպէս որ յայտնի է բոլորիդ, կը մնան միմիայն մշակոյթի մարզին մէջ, եւ գոհունակ սրտով կը պարզենք զանոնք Ձեզի այն գիտակցութեամբ թէ մեր սահմանափակ պայմաններուն տակ տարածանշահախնդիր ու խոնարհ աշխատանքը, ինչպէս անցեալի մէջ, այս տարի եւս տուաւ իր օգտակար արդիւնքը:

1971 տարուան ընթացքին Յանձնախումբս կը բաղկանար հետեւեալ ան-
դամներէն.

- | | | | |
|-------------------|------------|-----------------|--------------|
| Պրն. Ն. Ուզունեան | Ատենապետ | Պրն. Կ. Շամլեան | Փոխ Ատենապետ |
| Տիկ. Ա. Արթինեան | Ատենադպիր | Օր. Ս. Շամլեան | Գանձապահ |
| Տիկ. Ս. Բէքլիքեան | Խորհրդական | Տիկ. Մ. Գունթէր | Խորհրդական |
| Պրն. Վ. Բէթլի | Խորհրդական | Պրն. Մ. Թունեան | Խորհրդական |
| Պրն. Ժ. Նշանեան | Խորհրդական | Պրն. Տ. Պալեան | Խորհրդական |

Մեր նախկին անդամներէն Պր. Ն. Իփէքեան մեկնած է ԹՕՐՕՆԹՕ:

Ստորեւ կը ներկայացնենք ամփոփ տեղեկատուութիւնը Յանձնախումբիս
ունեցած գործունէութեանց 1971 տարուան ընթացքին:

Մեր գործունէութեանց բացումը կատարուեցաւ խիստ մշակեալ բանաս-
տերծական երեկոյթով մը, 6 Փետրուարին, Եկեղեցւոյս մշակութային սր-
ահին մէջ, ուր բանաստեղծութիւն, ընտիր դասական նուագ եւ բնութե-
նէն քաղուած գունաւոր ու գեղեցիկ լուսապատկերներու ամբողջութիւն
մը խաղաղութեան ու ապրումի վայելքներ պատճառեցին ներկաներուն:

Գեղարուեստական ցուցադրութիւն մեր երիտասարդ ամաթէՕներուն
կողմէ որ հինգ Օր շարունակաբար ընդունեց անելի քան չորս հարիւր այ-
ցելուներ: Տեղի ունեցաւ Եկեղեցւոյս մշակութային սրահին մէջ, 21
Մարտէն սկսեալ: Այս ցուցահանդէսին նպատակն էր ճանչնալ ու քաջալե-
րել մեր երիտասարդ արուեստասէրները:

Անելի դրական կերպով ոգեկոչելու համար յիշատակը ապրիլեան եղեւ-
նի մեր նահատակներուն, 1971ին, Յանձնախումբս որոշեց կազմակերպել
երգեհոնի համերգ մը, հրաւիրելով համբաւուոր երգեհոնահար Պերճ Ժամ-
կոչեանը որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի երգեհոնին վրայ տր-
ւաւ իր տպաւորիչ համերգը: Խիստ հետաքրքրական էր ու պատշաճ իր յայ-
տագիրը գոր բծախնդրութեամբ կատարեց յարգելի երաժշտագէտը ընտրանի
ունկնդիրներու ներկայութեան:

Տրուած ըլլալով որ 1971 տարին կը նշէր 100ամեակը Գարեգին Կաթողի-
կոս Յովսէփեանի, այս առթիւ ունեցանք յիշատակի հանդէս մը, 6 Նոյեմբեր-
ին կազմակերպութեամբ Մամիկոնեան Մշակութային Յանձնախումբի եւ Կոմի-
տաս Դպրաց Դասու: Օրուան բանախօսն էր Ունշինկթրնի հովիւ Տ. Բաբգէն
Եպս. Վարժապետեան: Տպաւորիչ էր յայտագիրը եւ ճոխացած Հայրապետին
կեանքէն քաղուած լուսապատկերներով: Գեղեցիկ էր կենդանի պատկերը որ
կը ներկայացնէր Սարտրապատի ձակատամարտը, որ նաեւ պատրաստուած էր
Եկեղեցւոյս երիտասարդներուն կողմէ:

7 Նոյեմբերին ունեցանք եպիսկոպոսական պատարագ եւ հոգեհանգիստ
որուն յաջորդեց ճաշի սպասարկութիւն Եկեղեցւոյս Տիկնանց Օժանդակ Մի-
ութեան կողմէ: Յետ ճաշու տեղի ունեցաւ առաջին անգամ ըլլալով ցու-
ցադրութիւնը Հայրենիքի մէջ քաջուած այն եփլմին որ կը պատմէր ընտ-
րութիւնն ու Օժանդակ արարողութիւնը Վազգէն Վեհափառ Կաթողիկոսին:

Յանձնախումբս նախաձեռնարկ եղաւ նաեւ Միլանօէն բերել տալու հայ
ճարտարապետութիւնը ներկայացնող տասը հատորնոց այն հոյակապ մատենա-
շարը որ պատրաստուած է հայ եւ իտալացի ճարտարապետներու կողմէ: Այս
տարի եւս պատրաստեցինք հայերէն լեզուով շնորհաւորական քարտերը ո-
րոնք ցրուեցան ի սփիւռս աշխարհի եւ արժանացան գնահատանքի: Յանձնա-
խումբս գեղեցիկ զաղափարո ունեցաւ պատրաստել տալու բլեքսիկլասով բա-
ժակակալներ որոնց զարդարանքը կը կազմեն հայկական մօթիվներ. գործ մեր
յարգելի փոխ ատենապետ Պրն. Կարօ Շամլեանի:

Այս տարուան ընթացքին հիմնեցինք մշակութային փոխ-յարաբերութեանց կապեր, ի միջի այլոց, փարիզի էրէբունի հրատարակչական տան հետ, որոնց հրատարակած մանուկներու յատուկ գիրքերէն եւ ձրանսերէնով արտասան-ւած, հայ գրականութեան նմոյշներ պատկերացնող ձայնապնակներէն ներածեցինք եւ բաժնեցինք մեր մեծ ու փոքրիկ մշակութասէրներուն: Եւ այս գանձերը եւ մեր գիրքերու հաւաքածոն պարփակելու համար ունեցանք նոր ու լայնածաւալ գրադարան մը որուն համար հրապարակաւ շնորհակալութիւն ու գնահատանք կը յայտնենք Պատուարժան Ծխական Խորհուրդի ժրջան Ատենապետ, նաեւ Յանձնախումբիս խորհրդական անդամ Պրն. Վահէ Բէթլիի որուն բարի զգացումներուն կը պարտինք այս գրադարանին գոյութիւնը:

Մամիկոնեան Մշակութային Յանձնախումբը կը դիմաւորէ նոր տարին նւիրուով ու ծառայութեան տրամադրութեամբ եւ յաջողելու կորովով ու ջերմ եռանդով:

Յարգանք
Ն. ՈՒԶՈՒՆԵԱՆ ԱՐԱՔՍ ԱՐԹԻՆԵԱՆ
Ատենապետ Ատենաղպիր

ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲԻ

ՄՈՒՏՔ 1971

ԵԼՔ 1971

Փոխադրուած 1970է	128.55	Հայրիկին եւ փեսային	10.00
Ծախուած քարտեր	98.50	Ծախսեր նուազահանդէսի	214.79
Ծախուած գիրքեր	44.05	Պերճ ժամկոչեանին	412.00
Նուիրատուութիւնք	61.00	Շիջման ձոնտին նուէր	100.00
Տարեկան տոկոս	85		
Երգ հոնի նուազահանդէսէն	751.02		786.79
	1078.97	ի պահ	842.18
			1078.97



ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԲՈՒՐԱՍՏԱՆ
ԱՄՍԱԹԵՐԹԻ

Ներկայացուած 15 փետրուար 1972ի Տարեկան Ծխական Ժողովին

Յարգելի ծխական անդամներ,

Հանդըն ունինք այսօրուան Ծխական Տարեկան Ժողովին ներկայացնելու ԲՈՒՐԱՍՏԱՆ ամսաթերթի բարոյական հակիրճ տեղեկատուութիւնը, առանց մեծ յաւակնութիւններու:

Երբ ակնարկ մը նետենք 1971 տարեշրջանի ընթացքին կանոնաւոր եւ առանց յայադումի լոյս տեսած 12 թիւերուն վրայ, հոգեկան զոհունակութեամբ կը տեսնենք թէ շարունակած ենք, ինչպէս անցեալին, մեր ուղեգիծը միշտ ի մտի ունենալով զաղութիս եւ եկեղեցւոյս կենսական շահերը:

Շահեկան կը նկատենք անդրադարձում ունենալ հետեւեալ կէտերուն շուրջ.
1. ՏՊԱՔԱՆԱԿ Բուրաստանի ամսական տպաքանակն է 1000: Մոնթրէալի բաժանորդներուս կը դրկուին աւելի քան 700 օրինակ, իսկ մնացեալը Սփիւռքահայ կարգ մը բաժանորդներու, հայրենիքի թէ սփիւռքի մամուլներուն եւ ազգային հաստատութիւններուն:

2. ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. Ծանօթ է մեր յարգելի ընթերցողներուն թէ գաղութա-
 յին, ընկերային, եկեղեցական, գիտական, գրական, կրթական, երիտասար-
 դական, մարզական, սկստուական եւ այլ յօդուածներու կարգին, մասնաւոր
 կերպով ջանացած ենք անդրադառնալ կարգ մը կարեւոր եղելութիւններու,
 ինչպէս Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի ծննդեան 100ամեակին եւ գոր-
 ծին, Գանատայի Առաջնորդական նախկին Փոխանորդ Գեր. Տ. Վաչէ Եպս. ի
 մեկնումին թեմական համագումարին, աշխարհահռչակ գիկնական Վիգոր
 Համբարձումեանի եւ հայրենի ականաւոր դէմքերու այցելութիւններուն,
 եկեղեցւոյս օժման տարեդարձին եւ տարեկան պարահանդէսին: Ուրախալի
 երեւոյթ է որ 1971 տարեշրջանին Մոնթրէալէն նոր գրողներ յայտնուե-
 ցան եւ մենք զանոնք քաջալերեցինք հրատարակելով անոնց գրութիւնները:

3. ԱՌԱՔՈՒՄ. Հասցէներու ճշդումը կատարուեցաւ եւ փութացնելու համար
 թերթին առաքումը, որդեգրեցինք նոր ձեւ մը որով թերթը բաժանորդներուն
 կը հասնի երկու օրէն: Հոս կը փափաքինք շեշտել թղթատարական սակերու
 յաւելումը եւ այդ պատճառաւ մենք հարկադրուեցանք թերթին թուղթը աւելի
 բարակ տեսակով փոխարինել առանց սակայն անոր պարունակութիւնը գոհե-
 լու: Կայ պարագայ մը եւս գոր կը փափաքինք ոմանց ուշադրութեան յանձ-
 նել: ԲՈՒՐԱՍՏԱՆԻ Իւրաքանչիւր էջին մեքենագրուած չափն է 12 ինչով 9,
 բայց տպագրութեան ժամանակ այդ ծաւալը կը պզտիկնայ եւ կը վերածուի
 ներկայ տպագրուած ծաւալին:

4. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ. Տնօրէն Արամ Կուտսուզեան, խմբա-
 գիրներ նուրհան Ուզունեան եւ Գրիգոր Գրլճեան, ընդհանուր քարտուղար-
 ուհի օր. Սօսի Շամլեան, համայնքային լուրերու պատասխանատու Վահէ Բէթլի,
 գեղազարդումի պատասխանատու Սերովբէ Գուլումճեան, տպագրութիւն Պերճ
 էսսէն:

Շնորհիւ վերոյիշեալներու կանոնաւոր եւ սիրայօժար աշխատութեանց
 եւ աջակցութեանը Տիկին Արաքսի Ազնաւուրի, Տիկին Արաքս Արթինեանի,
 Կարօ Շամլեանի, Խորէն Տէտէեանի եւ Եղիա Պէքմէզճեանի, թերթիս տարեկան
 պիւտճէն նուազագոյնը կը նկատենք, հակառակ պարագային այդ պիւտճէն քա-
 ռապատիկը պիտի ըլլար:

5. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ, եւ այլն. Ուրախութեամբ կը
 յայտնենք թէ բաժանորդներու թիւը, նուիրատուութիւնները եւ ծանուցում-
 ները զգալիօրէն աւելցած են եւ բաժանորդագիներու զանձումները կանո-
 նաւորուած: Կը յուսանք թէ մօտ ապագային ԲՈՒՐԱՍՏԱՆ ինքնաբաւ պիտի
 ըլլայ:

Մեր այս համեստ տեղեկատուութիւնը անշուշտ չի ցուցներ թափուած
 ճիգերու եւ կատարուած աշխատանքներու ամբողջական տարողութիւնը, բայց
 մենք կը հաւատանք թէ մեր թերթը ներկայ պայմաններու մէջ լիովին կը
 կատարէ իր առաքելութիւնը: Մենք մեզ քաջալերուած եւ վարձատրուած կը
 զգանք գնահատական այն արտայայտութիւններով որոնք մեզի կուղղուին
 բերանացի թէ գրաւոր կերպով բոլոր խաւերէ: Շնորհակալ ենք գնահատական
 արտայայտութեանց համար: Շնորհակալ ենք մանաւանդ Միակն խորհուրդին
 որ ամէն կերպով զօրավիգ կը կանգնի մեզի: Նաեւ գաղութիս բոլոր կազ-
 մակերպութիւններուն, աշխատակիցներուն, բաժանորդներուն եւ այն ազգա-
 յիններուն որոնց աջակցութեամբ եւ օժանդակութեամբ շարունակեցինք մեր
 գործը եւ պիտի շարունակենք զայն խոստանալով 1972 տարեշրջանին աւելի
 եւս բարելաւուած եւ պարունակութեամբ աւելի ճոխ ԲՈՒՐԱՍՏԱՆ մը:

Յաջողութեան մաղթանքներ ձեզի եւ մեզի: Տնօրէն

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԵՆԿԱ ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

Այս տարի եւս գործունէութեան բեղուն շրջան մը բոլորեց
Հայաստանեմայր Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Մոնթրէալի
Մասնաճիւղը:

Սոյն կազմակերպութեան նպատակն է Հայ երիտասարդները ոչ
պատանիները քով քովի համախմբել՝ զաղուծի կեդրոնը նկատուող Եկեղեց-
ւոյ շուրջ: Պատրաստել իրենց համար գեմին մը ուր կարենան աշխատանք
տանիլ համերաշխ եւ առողջ մթնոլորտի մը մէջ: Ինքզինքնին պատրաստեն
եւ նոյնժամանակ զարգացնեն ապագային համար: Վարչութիւնս կը փորձէ
երիտասարդութեան տալ այն ինչ որ վերացական է, այն ինչ որ տրամա-
բանական է եւ կը համապատասխանէ իրողութեան:

Երիտասարդ մը պէտք է հեռաւոր նպատակակէտ մը ունենայ:
Պէտք է հպարտ զգայ իր հայութեամբ այս օտար ափերուն վրայ: Եւ անպէ-
տէ աշխատի զաղուծին ծառայելու նշանաբանով: Այդ հեռաւոր նպատակը
ՀԱՅԱՍՏԱՆՆ Է Եւ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԷՐՈ: Ինչ որ իրողութիւն է՝ եւ տրամա-
բանական: Այս սէրը մեզ կը զօրացնէ եւ կօզնէ չյուսալքուելու:

Մեր գլխաւոր ձեռնարկներէն մէկը եղած է մեր պարբերա-
թերթ ՅԱՂԹԱՆԱԿ ին տպագրութիւնը եւ ծաւալումը:

Իսկ որպէս նոր ձեռնարկ ունինք Կիրակի օրերու մեր աշ-
խատանքը: Կը փորձենք մեր կրտսերներուն տալ այն ինչ որ Հայեցի է:
այն ինչ որ մեր սահմաններու մէջ է: Սոյն ձեռնարկը կանոնաւոր կեր-
պով կը շարունակուի նոյեմբեր 7 1971 թուականէն ի վեր:

Ունեցանք մշակութային գետնի վրայ տարուած աշխատանքներ
ալ ինչպէս Գարեգին Կաթողիկոսի 100 ամեակի տօնակատարութիւնը:

Ընկերային շարժումները դուրս եկան որպէս շատ յաջող
ձեռնարկներ, մեզի տալով կազմակերպելու փորձառութիւնը:

Ունինք նաեւ փինկ-փօնկի եւ շահմատի անկման շարժում-
ներ, որոնք դանդաղ եւ սակայն հաստատ քայլերով կը յառաջանան:

Կուզենք մեր անկեղծ շնորհակալութիւնը յայտնել Պատուաբ-
ժան Միսական Խորհուրդի կազմին եւ բոլոր այն անձերուն, որոնք քաջա-
ջերեցին եւ նեցուկ կանգնեցան մեր կազմակերպութեան:

Ի դիմաց ՀԵՆԿԱ ի Մոնթրէալի Մասնա-
ճիւղին

Տիգրան Պալեան
Ատենադպիր
Շանթ Էօրէնյան
Ատենապետ

ՆԻՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՀԵՆԿԱ Ի

Ցուցուևար 1, 1971 - Դեկ 31, 1971

Մ Ո Ւ Տ Ք		Ե Լ Ք	
Փոխանձուած 1970 էն	162,48	Զայնապնակի գործիքներու	177,00
Դիմակաւոր Պարահանդէս 71	756,51	Բարձրախօսերու	50,00
Պարանցիկ հաւաքոյթներէ	216,57	Հեճկալի սենեակին	122,68
Շարժանկրարի ցուցադրուիթ,	12,88	Կոճակ ներու	19,60
Զանազան հասոյթներէ	88,50	Փինկ-փոնկի սեղանի	8,21
Տիար ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ Է	500,00	Շահմատի կազմածներու	5,00
Անմիջական գործածուիթեան	48,40	Գրենական պիտոյքներու	12,45
	-----	Դրամատան ծախսերու	18,90
	1729,79	Հեռագրերու	1,62
		Եկեղեցւոյ ֆոնս ին	1000,00

			1410,41
		Տուրքերու	284,50
		Պատրաստ գումար	84,88

			1729,79

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն
ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ՀԱՅ ԴՊՐՈՑ Ի վերամուտի արձանագրուիլունները եւ դասաւանդուիթեանց կանոնաւոր ընթացքը սկսաւ այս տարի Մայր Տաճարի բարեգարդուած յարակից բաժանմունքին մէջ։ Այս տարեշրջանին վարժարան կը յաճախեն 175 աշակերտներ։ Աշակերտուիլները բաժնուի զանազան դասարաններու հետեւեալ թիւերով։

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ Ի բաժնին մէջ	: 42	աշակերտներ
ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ	: 29	„
ԵՐԿՐՈՐԴ	: 28	„
ԵՐՐՈՐԴ	: 19	„
ԶՈՐՐՈՐԴ	: 25	„
ՀԻՆԳԵՐՐՈՐԴ	: 15	„
ՎԵՑԵՐՐՈՐԴ	: 12	„
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ	: 10	„

Վարժարանի խնամակալ Մարմինը գոհունակութեամբ կարձանագրէ թէ վարժարանի բացման առաջին օրէն հաջեցի դաստիարակութեան եւ Հայ Եկեղեցի մշակման համար, Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ կը տանին նուիրեալ աշխատանք, որպէսզի պահուի յաջորդականութիւնը Հայ ոգիով սոգորուած ն ո ը Ս ե ը ու ն դ ն ե ը ու ։

Վարժարանի Տնօրէնութեան պաշտօնը ձեռնհասօրէն կը վարէ Տիկին Էլլտա Աքքիպրիթեան, հետեւեալ որակաւոր ուսուցչական կազմի գործակցութեամբ։

Օրիորդ Շ. ՊԱՍՄԱՃԵԱՆ	:	Պատասխանատու Ա	բաժնի
Օրիորդ Ա. ՄԱԹՈՍԵԱՆ	:	?	?
Տկն ԿՈՒՏՍՈՒԶԵԱՆ	:		
Օր ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ	:	Գ	?
Տիկին Ա. ԱԶՆԱԻՈՒՐ	:	Դ	?
Տիկին Է. ԹՈՓԻԿԵԱՆ	:	Ե	?
Տիկին Հ. ԿՈՒՏՍՈՒԶԵԱՆ	:	Զ	?
Տիկին Վ. ՊՈՅԱՃԵԱՆ	:	ԾԱՂԻԿ	?
Օրիորդ Ա. ԱՅՎԱՏԵԱՆ	:	ԿՈԿՈՆ	?
Տիկին Ս. ՄԷՆԷՆՏԵԱՆ	:		

Կրօնագիտութիւն եւ Հայոց Պատմութիւն դասաւանդեց Բարեշնորհ Վարդան Սրկ տէօլէքեան մինչեւ 1971 ի վերջաւորութեան, այժմ կը դասաւանդէ Ուրարակիւր Դպիր Ցարութիւն փալանճեան: Որպէս Օգնական ուսուցչուհի կը պաշտօնավարէ Վարժարանիս շրջանաւարտուհիներէն Օրիորդներ Հերա Աքքիպրիթեան, Լ. Քէօրօղլու եւ Ա. Մարտիկեան:

ՊԱՍՍԻԱՆԴՈՒԹԻՒՆ— Ըստ ուսուցման ծրագրին, վարժարանէն ներս կը դասաւանդուին հետեւեալ նիւթերը:

Կրօնագիտութիւն, Հայոց Պատմութիւն, Հայերէն եւ Երգ, որոնք կաւանդուին Հայ Լեզուին սէրը տղոց մէջ հրահրելու լուրջ աշխատանքով: Որպէս դասագիրք կուսուցուի ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ Ա, ԱՐԱԳԱԾ Ա Բ Գ Դ Ե եւ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ Զ եւ գրականութիւն: Մանկամարտէզի բաժինը կը հետեւի ԱՅԲԱԵՆԱՐԱՆ Ա եւ Բ: Բոլոր դասագրքերը եւ գրեական պիտոյքները ձրիօրէն տրամադրուած են աշակերտութեան:

ՀԱՆՐԱՅՆՆԵՐ ԵՒ ԶԻՆԱՐԿՆԵՐ— Նոր Տարուան եւ Ս Ծնունդի առիթով ուսուցչական կազմը կազմակերպեց ներքին հանդէս մը նշելով նաեւ Հայկական թէ Գանատական զանազան տօներ, ստեղծելով լայն խանդավառութիւն աշակերտութեան մէջ: Նոր Տարուան առիթով նուէրներ տրուեցան աշակերտութեան եւ ուսուցչական կազմին: Աշակերտութիւնը մասնակցեցաւ Պոլսի Հայ Միութեան կողմէ կազմակերպուած միջ վարժարանային արտասանական մրցումին արձանագրելով ու խլելով մրցանակներ:

Ծրագրուած երկու ծնողական հանդիպումներէն առաջինը տեղի ունեցաւ Ա Բ Գ կարգերու համար Դեկտեմբեր 4 1971 ին Դ եւ Զ կարգերու համար Դեկտեմբեր 18 ին: Առիթը տրուեցաւ ծնողներու այցելելու դասարանները մօտէն հետաքրքրուելու իրենց զաւակներու ուսմամբ եւ տեսնելու Հայերէն գիրերով գեղազարդուած ձեռագիր աշխատանքները:

Ծրագրուած է կազմակերպել ԹէՅԱՊԱՐ եւ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆՐԱՅՆ Վարժարանը պիտի արձակուողի մտնէ Յունիսի Բ կիսոյն:

Շաբաթօրեայ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ կը կատարէ իր առաքելութիւնը կարելի սահմաններուն մէջ, պահելու համար Հայ մանուկը օժտուած Հայեցի դաստիարակութեամբ:

Ի դիմաց ՇԱԲԱԹՕՐԵԱՅ Հայ Դպրոցի Խնամակալութեան

Վարդուհի Պալեան Ա. Զատրոճեան
Ատենադպիր Ատենապետ

